

3124

Պրակտիկական բույսերի, միացե՛ք

ԸՆԿ. ԻՎԱՆՈՎԻ ՆԱՄԱԿԸ  
ՅԵՎ  
ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

3 K.33

Ը-47

ՀԿ (Բ)Կ ԿԵՆՏԿՈՍԻ ԿՈՒՍԶՐԱՏ • 1938 • ՅԵՐԵՎԱՆ

3K 33  
Ը-47 *sup.*

15 JUN 2005

Պրակտիկայի բոլոր յերկրները, միացե՛ք

14 NOV 2009

ԸՆԿ. ԻՎԱՆՈՎԻ ՆԱՄԱԿԸ

Յ Ե Վ

ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՎՐԻՊԱԿ

|    |     |          |             |
|----|-----|----------|-------------|
| ԵՂ | Տաղ | Տպված է  | Պետք է լինի |
| 6  | 1 և | Ձառեղակի | Ձառեմակի    |

Հ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԿՈՒՍՅՐԱՏ • 1938 • ՅԵՐԵՎԱՆ



Партиздат ЦК КП(б) А. Ереван

Կուրսիկի մարզի Մանուռուրովսկի շրջանի Համլիզեն շրջկոմի հաստիքային պրոպագանդիստ Իվան Ֆիլիպովիչ Իվանովից :

Թ անդադրին ընկ. Ստալին, թախանձադիւն խնդրում եմ պարզաբանել ինձ համար հետեւյալ հարցը. մեզ մոտ տեղերում, և հենց կոմյերիտմիության մարզկոմում ել, յերկակի հասկացողություն կա մեր յերկրում սոցիալիզմի վերջնական հաղթանակի մասին, այսինքն՝ հակասությունների առաջին խումբը չփութում են յերկրորդի հետ: Խորհրդային Միութեան մեջ սոցիալիզմի բախտի մասին Ձեր աշխատություններում խոսվում է հակասությունների յերկու խմբերի մասին—ներքին և արտաքին:

Հակասությունները առաջին խմբի վերաբերմամբ հասկանալի չէ, վոր մենք ալիպիսի-

ները լուծել ենք—սոցիալիզմը յերկրի ներսում հաղթանակել է:

Յես կամենում եմ պատասխան ստանալ հակասությունների յերկրորդ խմբի, այսինքն՝ սոցիալիզմի յերկրի և կապիտալիզմի միջև յեղած հակասությունների մասին: Գուք մատնանշում եք, վոր սոցիալիզմի վերջնական հաղթանակը նշանակում է արտաքին հակասությունների լուծում, լիակատար ապահովություն ինտերվենցիայից, հետևապես և կապիտալիզմի ռեստավրացիայից: Իսկ հակասությունների այդ խումբը լուծելի յե միայն բոլոր յերկրների բանվորների ջանքերով:

Այո՛, ընկ. Լենինն ել մեզ սովորեցրել է— «վերջնականապես հաղթել կարելի յե միայն համաշխարհային մասշտաբով, միայն բոլոր յերկրների բանվորների միատեղ ջանքերով»:

ՀամԼԿՅԵՄ մարզկոմում ներկա լինելով հասարիքային պրոպագանդիստների սեմինարին, յես, հիմնվելով Ձեր աշխատությունների վրա, ասացի, վոր սոցիալիզմի վերջնական հաղթանակը կարող է լինել համաշխարհային մասշտաբով, սակայն մարզկոմական աշխատողները—Ուրոժենկոն (յերիտմարզկոմի առաջին քարտուղարը) և Կազեկովը (պրոպագանդայի գծով հրահանգիչը) իմ յեղույթը վորա-

կում են վորպես տրոցկիստական վոտնդուլթյուն:

Յես սկսեցի նրանց համար ցիտատներ կարգալ այս հարցի վերաբերյալ Ձեր աշխատություններից, սակայն Ուրոժենկոն ինձ առաջարկեց փակել յերեքհատորյակը, ասելով, թե «ընկ. Ստալինն ասել է 1926 թ., իսկ մենք արդեն ունենք 1938 թ., այն ժամանակ մենք վերջնական հաղթանակ չունեյինք, իսկ այժմ ունենք, և մենք այժմ վոչ մի կերպ չպետք է մտածենք ինտերվենցիայի ու ռեստավրացիայի մասին»։ Այնուհետև, նա ասում է — «մենք այժմ ունենք սոցիալիզմի վերջնական հաղթանակ և լիովին ապահովված ենք ինտերվենցիայից ու կապիտալիզմի ռեստավրացիայից»։ Յեվ այսպես, ինձ համարեցին տրոցկիզմի աջակից, հանեցին պրոպագանդիստական աշխատանքից և հարց դրին կոմյերիտմիության մեջ մնալու մասին:

Խնդրում եմ, ընկ. Ստալին, պարզաբանել—ունե՞նք մենք արդյոք սոցիալիզմի վերջնական հաղթանակ, թե առայժմ դեռևս վոչ: Գուցե յես դեռևս չե՞մ գտել ժամանակակից լրացուցիչ նյութ այս հարցի վերաբերմամբ՝ արդիականության փոփոխությունների կապակցությամբ:

Յեւ հակաընդդէմիւն էմ համարում Ուրո-  
թենկոյի նաև այն հայտարարութիւնը, թե  
այս հարցի առթիւ ընկ. Ստալինի աշխատու-  
թյունները մի քիչ հնացել են: Յեւ արդէոք  
ձի՞շտ են վարվել մարզկոմի աշխատողները՝  
ինձ տրոցկիստ համարելով: Այս բանն ինձ հա-  
մար չատ ցավալի ու վիրավորական է:

Խնդրում եմ, ընկ. Ստալին, մի՛ մերժեք  
խնդիրս և պատասխանեցեք հետևյալ հասցե-  
յով — Կուրսկի մարզի Մանուկըրովսկի շրջան,  
1-ին Զասեդսկի գյուղխորհուրդ, Իվան Ֆիլի-  
պովիչ Իվանովին:

Ի. ԻՎԱՆՈՎ

18. I. 1938 թ.

ՊԱՏԱՍԽԱՆ

ԸՆԿ. ԻՎԱՆ ՖԻԼԻՊՈՎԻՉ ԻՎԱՆՈՎԻՆ

Դուք, իհարկե, իրավացի յեք, ընկեր Ի-  
վանով, իսկ ձեր գաղափարական հակառա-  
կորդները, այսինքն ընկերներ Ուրոթենկոն և  
Կազեկովը — իրավացի չեն:

Յեւ ահա թե ինչու:

Անկասկած է, վոր սոցիալիզմի հաղթանա-  
կի հարցը մեկ յերկրում, տվյալ դեպքում՝ մեր  
յերկրում—ունի յերկու տարբեր կողմեր:

Մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի  
հարցի առաջին կողմն ընդգրկում է զասակար-  
գերի փոխհարաբերութիւնների պրոբլեմը մեր  
յերկրի ներսում: Դա ներքին հարաբերութիւն-  
ների բնագավառն է: Կարո՞ղ է արդէոք մեր  
յերկրի բանւոր զասակարգը հաղթահարել մեր  
գյուղացիութեան հետ ունեցած հակասու-  
թիւնները և նրա հետ միութիւն, համագոր-  
ծակցութիւն հաջողեցնել: Կարո՞ղ է արդէոք

մեր յերկրի բանվոր դասակարգը՝ մեր գյուղացիության հետ միացած, ջախջախել մեր յերկրի բուրժուազիային, խլել նրանից հողը, գործադանձերը, հանքահորերը և այլն և իր ուժերով կառուցել նոր անդասակարգ հասարակություն, լիովին սոցիալիստական հասարակություն:

Այսպիսին են մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի հարցի առաջին կողմի հետ կապված պրոբլեմները:

Այս պրոբլեմներին լենինիզմը պատասխանում է դրականորեն: Լենինը սովորեցնում է, վոր «մենք ունենք այն ամենը, ինչ անհրաժեշտ է լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար»: Հետևապես, մենք կարող ենք և պետք է սեփական ուժերով հաղթահարենք մեր բուրժուազիային և սոցիալիստական հասարակություն կառուցենք: Տրոցկին, Զինովյեվը, Կամենևիլը և մյուս այն պարոնները, վորոնք հետո դարձան Փաշիզմի լրտեսներ ու գործակալներ, ժխտում էին սոցիալիզմի կառուցման հնարավորությունը մեր յերկրում, առանց սոցիալիստական հեղափոխության նախնական հաղթանակի այլ յերկրներում, կապիտալիստական յերկրներում: Այդ պարոններն ըստ եյության ցանկանում է-

յին մեր յերկիրը չըջել հետ, դեպի բուրժուական զարգացման ուղին, իրենց նահանջողականությունը քողարկելով մյուս յերկրներում «հեղափոխության հաղթանակի» վերաբերյալ կեղծ վկայակոչումներով: Յեվ հենց դրա մասին էր մեր կուսակցության վեճն այդ պարոնների հետ: Մեր յերկրի զարգացման հետագա ընթացքը ցույց տվեց, վոր կուսակցությունն իրավացի յեր, իսկ Տրոցկին ու կոմպանիան իրավացի չէին: Վորովհետև այս ժամանակի ընթացքում մենք արդեն կարողացանք լիվիզացիայի յենթարկել մեր բուրժուազիային, յեղբայրական համագործակցություն հաստատել մեր գյուղացիության հետ և հիմնականում սոցիալիստական հասարակություն կառուցել, չնայելով մյուս յերկրներում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի բացակայության:

Մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի հարցի առաջին կողմի նկատմամբ բանն այսպես է:

Յեռ կարծում եմ, ընկ. Իվանով, վոր ընկերներ Ուրոժենկոյի և Կազելիովի հետ ունեցած ձեր վեճը վերաբերում է հարցի վոչ այս կողմին:

Մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի

հարցի յերկրորդ կողմն ընդգրկում ե մյուս յերկրների հետ, կապիտալիստական յերկրների հետ մեր յերկրի ունեցած փոխհարաբերությունների պրոբլեմը, մյուս յերկրների բուրժուազիայի հետ մեր յերկրի բանվոր դասակարգի ունեցած փոխհարաբերությունների պրոբլեմը: Դա—արտաքին, միջազգային հարաբերությունների բնագավառն է: Կարո՞ղ ե արդյոք մի այնպիսի յերկրի հաղթանակած սոցիալիզմը, վորն իր շրջապատում ունի բազմաթիվ ուժեղ կապիտալիստական յերկրներ, իրեն լիովին ապահովված համարել ռազմական ներխուժման (ինտերվենցիայի) վտանգից և, հետևաբար, մեր յերկրում կապիտալիզմը վերականգնելու փորձերից: Կարո՞ղ են արդյոք մեր բանվոր դասակարգն ու մեր գյուղացիությունը սեփական ուժերով, առանց կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի լուրջ ոգնության, հաղթահարել այլ յերկրների բուրժուազիային այնպես, ինչպես նրանք հաղթահարեցին իրենց բուրժուազիային: Այլ կերպ ասած՝ կարելի՞ չէ արդյոք սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում համարել վերջնական, այսինքն՝ ռազմական հարձակման վտանգից ու կապիտալիզմը վերականգնելու փորձերից ազատ, պայմանով, վոր սոցիալիզմը հաղթանա-

կած լինի միայն մի յերկրում, իսկ կապիտալիստական շրջապատումը շարունակի գոյություն ունենալ:

Այսպիսին են այն պրոբլեմները, վոր կապված են մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի հարցի յերկրորդ կողմի հետ:

Լենինիզմն այդ պրոբլեմներին բացասաբար ե պատասխանում: Լենինիզմը սովորեցնում ե, վոր «սոցիալիզմի վերջնական հաղթանակը՝ բուրժուական հարաբերությունների ռեստավրացիայից լիովին ապահովված լինելու իմաստով հնարավոր ե միայն միջազգային մասշտաբով» (տե՛ս ՀամԿ(բ)Կ 14-րդ կոնֆերենցիայի հայտնի բանաձևը): Այս նշանակում ե, վոր միջազգային պրոլետարիատի լուրջ ոգնությունը հանդիսանում ե այն ուժը, առանց վորի չի կարելի վորոշել մի յերկրում սոցիալիզմի վերջնական հաղթանակի խնդիրը: Այս, իհարկե, չի նշանակում, վոր մենք ինքներս պետք ե նստենք, ձեռքներս ծալած, սպասելով արտաքին ոգնության: Ընդհակառակը, միջազգային պրոլետարիատի կողմից ցուցաբերված ոգնությունը պետք ե միացված լինի մեր յերկրի պաշտպանությունն ուժեղացնելու, Կարմիր բանակն ու Կարմիր նավատորմն ուժեղացնելու, ռազմական հարձակման ու բուրժուական

հարաբերությունների վերականգնման փորձերի դեմ պայքարելու համար ամբողջ յերկիրը մորելիզացիայի յենթարկելու մեր աշխատանքի հետ:

Ահա թե այս առթիվ Լենինն ինչ է ասում.

«Մենք ապրում ենք վոչ միայն պետութայն մեջ, այլև պետութայնականների սխառմի մեջ, և խորհրդային հանրապետութայն յերկարատե գոյությունն իմպերիալիստական պետությունների կողքին աներեւակայելի յե: Վերջիվերջո կա'մ մեկը, կա'մ մյուսը կհաղթի: Իսկ մինչև վոր այդ վերջը վրա հասնի, խորհրդային հանրապետութայն և բուրժուական պետությունների միջև միշարք ամենասարսափելի ընդհարումներն անխուսափելի յեն: Այդ նշանակում է, վոր տիրապետող դասակարգը, պրոլետարիատը, յեթե միայն նա ցանկանում է տիրապետել և տիրապետի, այդ բանը պետք է ապացուցի նաև իր ռազմական կազմակերպությամբ» (հատ. 24-րդ, էջ 122):

Յեվ ապա.

«Մենք չըջապատված ենք մարդկան-

ցով, դասակարգերով, կառավարություններով, վորոնք բացահայտորեն ատելություն են տածում դեպի մեզ: Պետք է հիշել, վոր ամեն մի արշավանքից մենք միշտ մազաչափ ենք հեռու» (հատոր 27-րդ, էջ 117):

Ասված է սուր և խիստ կերպով, բայց ազնվորեն ու իրավացիորեն, առանց գոնա-վորման, ինչպես գիտեր ասել Լենինը:

Այդ նախադրյալների հիման վրա Ստալինի «Լենինիզմի հարցերում» ասված է.

«Սոցիալիզմի վերջնական հաղթանակը լիակատար ապահովություն է ինտերվենցիայի փորձերից, իսկ այդ նշանակում է նաև ռեստավրացիայի փորձերից, վորովհետև ռեստավրացիայի վորքանե է լուրջ փորձ կարող է տեղի ունենալ դրսի լուրջ աջակցությամբ միայն, միջազգային կապիտալի աջակցությամբ միայն: Այս պատճառով բոլոր յերկրների բանվորների աջակցությունը մեր հեղափոխությանը, իսկ առավել ևս այդ բանվորների հաղթանակը թեկուզ միջանի յերկրներում՝ անհրաժեշտ պայմանն է, վոր առաջին հաղթանակած

յերկիրը լիապես ապահովված լինի ինտերվենցիայի ու ռեստավրացիայի փորձերից, անհրաժեշտ պայմանը սոցիալիզմի վերջնական հաղթանակի» («Լենինի զգմի հարցերը», էջ 134, 1937 թ.) (հայերեն՝ 1935 թ. հրատ., էջ 173):

Իսկապես, ծիծաղելի և հիմար բան կլինե՞ր աչքերը փակել կապիտալիստական շրջապատման փաստի հանդեպ և մտածել, վոր մեր արտաքին թշնամիները, որինակ, Ֆաշիստները չեն փորձի առիթ յեղած դեպքում ռազմական հարձակում գործել ԽՍՀՄ վրա: Այսպես կարող են մտածել միայն կույր պարծենկոտները կամ թագնված թշնամիները, վորոնք ցանկանում են թմրեցնել ժողովրդին: Ավելի պակաս ծիծաղելի չե՞ր լինի ժխտելը, թե ռազմական ինտերվենցիայի ամենափոքր հաջողության դեպքում ինտերվենտները կփորձեն իրենց գրաված շրջաններում քանդել խորհրդային կարգը և վերականգնել բուրժուական կարգը: Մի՞թե Դենիկինն ու Կոլչակը իրենց գրաված շրջաններում չէյին վերականգնում բուրժուական կարգը: Փաշիստներն ինչո՞վ են լավ Դենիկինից կամ Կոլչակից: Կապիտալիստական շրջապատման առկայության պայմաններում ռազմական ինտերվենցիայի ու ռեստավրա-

ցիայի փորձերի վտանգը ժխտել կարող են միմիայն քյալլագոյններն ու թագնված թշնամիները, վորոնք ցանկանում են պարծենկոտությամբ քողարկել իրենց թշնամությունը և աշխատում են դեմոքրիլիզացիայի յենթարկել ժողովրդին: Սակայն կարելի՞ յե արդյոք մի յերկրում սոցիալիզմի հաղթանակը վերջնական համարել, յեթե այդ յերկիրն իր շուրջն ունի կապիտալիստական շրջապատում և յեթե նա լիովին ապահովված չե ինտերվենցիայի ու ռեստավրացիայի վտանգից: Պարզ ե, վոր չի կարելի:

Մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի հարցի նկատմամբ բանն այսպես ե:

Դուրս ե գալիս, վոր այս հարցը պարունակում ե յերկու տարբեր պրոբլեմներ. ա) մեր յերկրի նեքսիճ հարաբերությունների պրոբլեմը, այսինքն իր բուրժուազիային հաղթահարելու և լիակատար սոցիալիզմ կառուցելու պրոբլեմը և բ) մեր յերկրի աքսաֆին հարաբերությունների պրոբլեմը, այսինքն մեր յերկիրը ռազմական ինտերվենցիայի ու ռեստավրացիայի վտանգներից լիովին ապահովելու պրոբլեմը: Առաջին պրոբլեմը մեր կողմից արդեն լուծված ե, վորովհետև մեր բուրժուազիան արդեն լիկվիդացիայի յե յենթարկված և

սոցիալիզմը հիմնականում արդեն կառուցված է: Սա մեզանում կոչվում է սոցիալիզմի հաղթանակ, կամ ավելի ճիշտը՝ սոցիալիստական չինարարության հաղթանակ մի յերկրում: Մենք կարող եյինք ասել, վոր այդ հաղթանակը վերջնական է, յեթե մեր յերկիրը գտնվելիս լիներ մի կղզու վրա և յեթե նրա շուրջը չլիներ բազմաթիվ այլ, կապիտալիստական յերկրներ: Բայց քանի վոր մենք ապրում ենք վո՛չ թե կղզու վրա, այլ այնպիսի «պետությունների սիստեմում», վորոնց նշանակալից մասը թշնամաբար է վերաբերվում դեպի սոցիալիզմի յերկիրը՝ ստեղծելով ինտերվենցիայի ու ռեստավրացիայի վտանգ, ապա մենք բացահայտորեն ու ազնվորեն ասում ենք, վոր սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում դեռևս վերջնական չի հանդիսանում: Սակայն սրանից հետևում է, վոր յերկրորդ պրոբլեմը դեռևս լուծված չէ և այն դեռևս պետք է լուծել: Դեռ ավելին. յերկրորդ պրոբլեմն անկարելի յե լուծել նույն այն կարգով, ինչ կարգով վոր լուծել ենք առաջին պրոբլեմը, այսինքն մեր յերկրի լոկ սեփական ջանքերի միջոցով: Յերկրորդ պրոբլեմը կարելի յե լուծել միջազգային պրոլետարիատի լուրջ ջանքերը մեր ամբողջ խորհրդային ժողովրդի ե՛լ ավելի լուրջ ջանքերի հետ միացնելու կարգով միայն: Հարկավոր է ուժեղացնել ու ամրապնդել յերկրի յերկրների յերկրների բանվոր դասակարգի հետ. հարկավոր է կազմակերպել բուրժուական յերկրների բանվոր դասակարգի քաղաքական ոգնությունը մեր յերկրի բանվոր դասակարգին՝ մեր յերկրի վրա ռազմական հարձակում լինելու դեպքում, ինչպես նաև կազմակերպել մեր յերկրի բանվոր դասակարգի ամեն տեսակի ոգնությունը բուրժուական յերկրների բանվոր դասակարգին. հարկավոր է ամեն կերպ ուժեղացնել ու ամրապնդել մեր Կարմիր բանակը, Կարմիր Նավատորմը, Կարմիր ավիացիան, Պաշտպանական հարձակման վտանգի վիճակում՝ ռազմական հարձակման վտանգի դեմ-հանդիման, վորպեսզի վո՛չ մի «պատահականություն» և մեր արտաքին թշնամիների վո՛չ մի ֆոկուս չկարողանան մեզ հանկարծակիի բերել...

Ջեր նամակից յերևում է, վոր ընկ. Ուրո-ժենկոն այլ հայացքներ ունի, վոչ բոլորովին լենինյան հայացքներ: Նա, բանից դուրս է գալիս, պնդում է, վոր «մենք այժմ ունենք սոցիալիզմի հիմնականում արդեն կառուցված միայն: Հարկավոր է ուժեղացնել ու ամրապնդել ԽՍՀՄ բանվոր դասակարգի ինտերնացիոնալ պրոլետարիական կապերը բուրժուական յերկրների բանվոր դասակարգի հետ. հարկավոր է կազմակերպել բուրժուական յերկրների բանվոր դասակարգի քաղաքական ոգնությունը մեր յերկրի բանվոր դասակարգին՝ մեր յերկրի վրա ռազմական հարձակում լինելու դեպքում, ինչպես նաև կազմակերպել մեր յերկրի բանվոր դասակարգի ամեն տեսակի ոգնությունը բուրժուական յերկրների բանվոր դասակարգին. հարկավոր է ամեն կերպ ուժեղացնել ու ամրապնդել մեր Կարմիր բանակը, Կարմիր Նավատորմը, Կարմիր ավիացիան, Պաշտպանական հարձակման վտանգի վիճակում՝ ռազմական հարձակման վտանգի դեմ-հանդիման, վորպեսզի վո՛չ մի «պատահականություն» և մեր արտաքին թշնամիների վո՛չ մի ֆոկուս չկարողանան մեզ հանկարծակիի բերել...

Ջեր նամակից յերևում է, վոր ընկ. Ուրո-ժենկոն այլ հայացքներ ունի, վոչ բոլորովին լենինյան հայացքներ: Նա, բանից դուրս է գալիս, պնդում է, վոր «մենք այժմ ունենք սոցիալիզմի հիմնականում արդեն կառուցված միայն: Հարկավոր է ուժեղացնել ու ամրապնդել ԽՍՀՄ բանվոր դասակարգի ինտերնացիոնալ պրոլետարիական կապերը բուրժուական յերկրների բանվոր դասակարգի հետ. հարկավոր է կազմակերպել բուրժուական յերկրների բանվոր դասակարգի քաղաքական ոգնությունը մեր յերկրի բանվոր դասակարգին՝ մեր յերկրի վրա ռազմական հարձակում լինելու դեպքում, ինչպես նաև կազմակերպել մեր յերկրի բանվոր դասակարգի ամեն տեսակի ոգնությունը բուրժուական յերկրների բանվոր դասակարգին. հարկավոր է ամեն կերպ ուժեղացնել ու ամրապնդել մեր Կարմիր բանակը, Կարմիր Նավատորմը, Կարմիր ավիացիան, Պաշտպանական հարձակման վտանգի վիճակում՝ ռազմական հարձակման վտանգի դեմ-հանդիման, վորպեսզի վո՛չ մի «պատահականություն» և մեր արտաքին թշնամիների վո՛չ մի ֆոկուս չկարողանան մեզ հանկարծակիի բերել...



ցիալիզմի վերջնական հաղթանակը և ունենք լիակատար ապահովություն ինտերվենցիայից և կապիտալիզմի ռեստավրացիայից»։ Կասկած չի կարող լինել, վոր ընկ. Ուրոժենկոն արմատապես իրավացի է։ Ընկ. Ուրոժենկոյի այդպիսի պնդումը կարող է բացատրվել չրջապատող իրականությունը չհասկանալով և լենինիզմի տարրական դրույթները չիմանալով միայն, կամ թե չե՝ գոռոզացած յերիտասարդ չինուվնիկի դատարկ պարծենկոտությամբ։ Յեթե մենք իրոք «լիակատար ապահովություն ունենք ինտերվենցիայից ու կապիտալիզմի ռեստավրացիայից», ապա դրանից հետո մեզ հարկավոր են արդյոք ուժեղ Կարմիր բանակ, Կարմիր նավատորմ, Կարմիր ավիացիա, ռաժեղ Պաշտպանական ուժեր, ինտերնացիոնալ պրոլետարական կապերի ուժեղացում և ամրապնդում։ Ավելի լավ չի՞ լինի արդյոք միլիարդներով այն դրամը, վոր ծախսվում է Կարմիր բանակի ուժեղացման վրա, գործադրել այլ կարիքների վրա, իսկ Կարմիր բանակը կրճատել մինչև մինիմում, կամ նույնիսկ բոլորովին ցրել։ Այնպիսի մարդիկ, ինչպես ընկ. Ուրոժենկոն, յեթե նրանք սուբյեկտիվորեն նույնիսկ նվիրված են մեր գործին, որ յեկտիվորեն վտանգավոր են մեր գործի համար, վորով-

հետև նրանք իրենց պարծենկոտությամբ կամա թե ակամա (այդ միևնույն է) թմրեցնում են մեր ժողովրդին, դեմոքրիլիզացիայի յեն յեն-թարկում բանվորներին ու գյուղացիներին և ոգնում են թշնամիներին՝ միջազգային բարդությունների դեպքում մեզ հանկարծակիի բերելու։

Ինչ վերաբերում է այն բանին, ընկ. Իվանով, վոր ձեզ, բանից դուրս է գալիս, «հանել են պրոպագանդիստական աշխատանքից և հարց են դրել կոմյերիտմիության մեջ մնալու մասին», ապա դուք դրանից չպետք է վախենաք։ Յեթե ՀամԼԿՅՅՄ մարդկոմի մարդիկ իսկապես ցանկանան նմանվել չեխովյան ունտեր-ոֆիցեր Պրիշիբեյեվին, կարելի չէ չկատկածել, վոր նրանք այդ գործում տաքուկ կտան։ Մեր յերկրում Պրիշիբեյեվներին չեն սիրում։

Այժմ դուք կարող եք դատել, հնացե՞լ է արդյոք «Լենինիզմի հարցերը» գրքի հայտնի տեղը՝ մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի հարցի վերաբերմամբ։ Յես ինքս չատ կուզեյի, վորպեսզի նա հնանար, վորպեսզի աշխարհում այլևս չլինեյին այնպիսի անհաճո բաներ, ինչպես կապիտալիստական չրջապատումը, ռազ-

մական հարձակման վտանգը, կապիտալիզմի  
ռեստավրացիայի վտանգը և այլն: Սակայն,  
ցավոք սրտի, այդ անհաճո բաները դեռևս չա-  
րունակում են դոյուլթյուն ունենալ:

Ի. ՍՏԱԼԻՆ

12 փետրվարի 1938 թ.



Թարգմանեց Ա. Տ.-Մկրտչյան  
Թարգմանությունը խմբագրեց Բ. Ն. Դավթյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Սրբագրեչ Վ. Զիդեշյան  
Կոնտրոլ սրբագրեչ Լ. Արուստյան

Գլավլիտի լիազոր № 4—3264. հրատ. № 542.

պատվեր № 32, տիրաժ 35.000.

Թղթի չափսը 72×105<sup>1</sup>/<sub>16</sub>, 38.400 տպ. նիշ 1 տպ. մասնուլու.

1<sup>1</sup>/<sub>2</sub> տպ. մամուլ, <sup>3</sup>/<sub>4</sub> թերթ թուղթ:


Հանձնված և արտադրության 20/II 1938 թ

ստորագրված և տպագրելու 23/II 1938 թ.

Գինը 15 Կ.

Հի(ը) Կենտկոմի Կուսհրատի տպարան.

Ցերեան, Ալավերդյան № 71:



ՀՀ Ազգային գրադարան



NL0186051

ԳԻՆԸ 15 Կ.

ПИСЬМО т. ИВАНОВА И ОТВЕТ  
ТОВАРИЩА СТАЛИНА

Партиздат ЦК КП (б) А. Ереван